ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-10/5-5»

ք. Երևան «09» «օգոստոսի» 2017 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Մեհրաբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 46,315,690 (քառասունվեց միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-

րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Լենինգրադյան 23/13 մուտք 2, 50
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ, Արշակունյաց մ/6
Հ/Հ 900011117034	Հ/Հ 1570020094780100
ՀՎՀՀ 02703824	ՀՎՀՀ 02627826
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

AN 0397421

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-10/5-5 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական բնութագիր
1	Սոսինձ՝ հեղուկ (Հեղուկ մեխ՝ սոսինձ)	Էլաստիկ, ներկվող, առանց հոտի: Լինոլեում, փայտ, կերամիկական սալիկ, ապակի, դեկորացիաներ, մետաղ և այլ շինարարական նյութեր սոսնձելու համար, 500 գ-ոց տարրաներով
2	Ջերմային մեկուսիչ նյութեր (Ապակե բամբակ)	Ապակե բամբակ երեսապատված ֆոլգայով (10x1,2) մ
3	Կեղծ հատակներ (Լամինատ)	Գույնը հաճարի կամ կաղնու, մանրահատակի ֆակտուրայով, չափը ոչ պակաս 197x1218x8.3մմ: Չորս կողմերը իրար հետ ամրանալու համապատասխան ելուստներով: Լամինատի հետ պետք է մատակարարվի նույն քանակի 2մմ հաստությամբ պարալոնե ծածկույթ:
4	Լինոլեում (Լինոլեում)	Հաստությունը՝ 3-4 մմ, հիմքը բրդյա-սինթետիկ գործվածքով, առնվազն 1.5մ լայնություն, առնվազն 30 գ.մ փաթեթներով
5	Բիտում Բիտում	Շինարարական նավթային բիտում ԲՆ-90/10 ըստ ԳՕՍՏ -6617-76 նախատեսված ջրամեկուսացման, ծածկի և մանրահատակի վերանորոգման աշխատանքների համար:փաթեթավորումը գործարանային 40կգ թղթե պարկերով: Պարկի վրա նշված լինի արտադրման ժամկետը և հանձնելու պահին մնացորդային առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ,պահպանման պայմաններ, որակի սերտիֆիկատ
6	Մակերեսային ծածկույթներ (Ռուբերոիդ)	Գույնը սև, փաթույթով, լայնությունը 0.9մ, երկարությունը 10մ, հաստությունը ոչ պակաս 1.0մմ
7	Տախտակ, փայտյա Տախտակ	Չամից (սոճուց), եզրահան, 4-5 մ երկարությամբ,50մմ հաստությամբ, 20-30սմ լայնությամբ
8	Տախտակ Տախտակ	Չամից (սոճուց), եզրահան, 5-6 մ երկարությամբ, 30 մմ հաստությամբ, առնվազն 15 սմ լայնությամբ
9	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ50*3.2	Պլաստմասսե անկյունակ, արտաքին տրամագիծը 50մմ, պատի հաստությունը 3.2մմ
10	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ100*3.2	Պլաստմասսե անկյունակ, արտաքին տրամագիծը 100մմ, պատի հաստությունը 3.2մմ
11	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-50*3.2	Պլաստմասսե անցում, արտաքին տրամագիծը 50մմ, պատի հաստությունը 3.2մմ
12	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-100*3.2	Պլաստմասսե անցում, արտաքին տրամագիծը 100մմ, պատի հաստությունը 3.2մմ
13	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-150	Պլաստմասսե անցում, արտաքին տրամագիծը 150մմ, պատի հաստությունը 3.2մմ
14	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S40x20Fx40	Նախատեսված է Φ-40 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը ներքին՝ 20մմ
15	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S50x20Fx50)	Նախատեսված է Φ-50 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը ներքին՝ 20մմ
16	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S63x20Fx63)	Նախատեսված է Φ-63 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը ներքին՝ 20մմ
17	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ20x20M)	Նախատեսված է Φ-20 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը արտաքին՝ 20մմ
18	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ25x20M	Նախատեսված է Φ-25 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը արտաքին՝ 20մմ
19	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի 25x20Mx25	Նախատեսված է Φ-25 պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրելու համար, ամրացումը չորս հեղյուս մանեկով, դուրս եկող կողմի պարույրը չժանգոտվող մետաղից արտաքին՝ 20մմ
20	Խողովակներ (Զուգարանակոնքի պղծ.ճկուն միացում L=600մմ)	Մետաղական կամ պղնձյա նիկելապատ, երկու ծայրերի գլխիկները D-15, ներքին պարույրով, երկարությունը 600մմ
21	Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ D, 20)	Տրամագիծը 20 մմ, միջնապատի շերտը ֆոլգայապատ,փաթեթավորումը գործարանային
22	Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Φ-50*3.2*1000)	Պոլիէթիլենային, արտաքին տրամագիծը 50մմ, պատի հաստությունը 3.2մմ, երկարությունը 1մ
23	Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-110*3.2*1000	Պոլիէթիլենային, արտաքին տրամագիծը 110մմ, պատի հաստությունը 3.2մմ, երկարությունը 1մ
24	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով Φ63 x50m)	Ձգման եղանակով Φ-63 պոլիէթիլենային խողովակը ամրացվում է 2" մետաղական խողովակին արտաքին պարույրով
25	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 63 x 50F)	Ձգման եղանակով Φ-63 պոլիէթիլենային խողովակը ամրացվում է 2" մետաղական խողովակին ներքին պարույրով
26	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով (Φ50 x 2F)	Ձգման եղանակով Φ-50 պոլիէթիլենային խողովակը ամրացվում է 2" մետաղական խողովակին ներքին պարույրով
27	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 20F x25փ)	Անցում ձգումով, պոլիէթիլենային Φ-25 խողովակը մետաղական 3/4 խողովակին ներքին պարույրով միացնելու համար
28	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային ձգումով Φ32 x25f)	Անցում ձգումով, պոլիէթիլենային Φ32 խողովակը մետաղական 1" խողովակին ներքին պարույրով միացնելու համար

29	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 120°, Φ-100)	Պատրաստված 0.4մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, նախատեսված տանիքի ջրհորդանների համար: Անկյան մեծությունը 120°, Φ-100մմ
30	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 120°, Φ-150)	Պատրաստված 0.4մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, նախատեսված տանիքի ջրհորդանների համար: Անկյան մեծությունը 120°, Φ-150մմ
31	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Mx20M	Լատունե մեկ ծայրը 1/2" արտաքին պարույր, մյուս ծայրը 3/4 արտաքին պարույր
32	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Fx20M	Լատունե մեկ ծայրը 1/2" ներքին պարույր, մյուս ծայրը 3/4 արտաքին պարույր
33	Նրբատախտակ Ֆաներա 10 մմ	Ընդհանուր նշանակության, արտաքին շերտերը սաղարթավոր կամ փշատերևի ծառատեսակներից, կախված մակերեսի արտաքին տեսքից, տարբեր տեսակների՝ հղկած, 10 մմ հաստությամբ (1,52*1,52) մ չափերով
34	Նրբատախտակ Ֆաներա 4մմ	Ընդհանուր նշանակության, արտաքին շերտերը սաղարթավոր կամ փշատերևի ծառատեսակներից, կախված մակերեսի արտաքին տեսքից, տարբեր տեսակների՝ հղկած, 4 մմ հաստությամբ (1,52*1,52) մ չափերով
35	Մեխ (Մեխ, 20մմ)	Մետաղական, 20 մմ երկարությամբ:
36	Ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար (Ներկելու հոլովակ, պլաստմասե լոգնոցով)	Հոլակի երկարությունը առնվազն 25սմ, լոգնոցի լայնությունը ոչ պակաս 25 սմ:
37	Վրձին, ներկարարական աշխատանքներ կատարելու համար (Վրձին)	Ներկարարական աշխատանքներ կատարելու համար, տարբեր տիպերի: Ներկող մասի երկարությունը 10 սմ, փայտե բռնակով
38	Եռակցման նյութեր (Կարբիտ)	40կգ-ից ոչ պակաս մետաղյա տակառով, ԳՈՍ 1460-81, ISO 2001-2000 ստանդարտին համապատասխան, CaC2 տարրայի վրա նշված լինի արտադրման և առնվազն 1 տարվա պիտանելիության ժամկետ
39	Երկաթյա արտադրանք Ամրան d=12 մմ	Ա-3 դասի, պարբերական, տրամագիծը 12մմ, ժամանակավոր դիմադրությունը 6000 կգ/սմ², մարկան 35 SU
40	Մետաղալարեր Մետաղալար d=2-3 մմ	Բարձր ամրության, հարթ մակերեսով, ջերմամշակված, տրամագիծը 2-3մմ
41	Ջրի ծորակ, փական Ջրի փական D15 <<ARKO>>	Մետաղական նիկելապատ երկու ծայրի տրամագիծը՝ 15 մմ, ..ARCO"
42	Փական՝ գնդաձև, D 15(Գնդաձև փական D 15)	Ջրագծի համար, տրամագիծը՝ 15մմ, բրոնզե համաձուլվածքից
43	Փական՝գնդաձև, D 20 (Գնդաձև փական D 20)	Ջրագծի համար, տրամագիծը՝ 20մմ, բրոնզե համաձուլվածքից
44	Փական՝ գնդաձև, D 25 (Գնդաձև փական D25)	Ջրագծի համար, տրամագիծը՝ 25մմ, բրոնզե համաձուլվածքից
45	Փական, խցանային, D 15 մմ Խցանային փական D 15 մմ	Խցանային փական, բրոնզե, տրամագիծը՝ 15 մմ
46	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	Պլաստմասե, օվալաձև, 230x280մմ չափերի
47	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	Պլաստմասե, օվալաձև, 230x280մմ չափերի, նստատեղը փափուկ
48	Զուգարանակոնք (Զուգարանակոնք)	Կերամիկական, նստատեղը ձվաձև 500x300մմ չափերի, կափարիչով,բաքը իր սարքավորումով, ջրի ելքի տրամագիծը 100մմ, խողովակի թեքությունը 45 աստիճան:
49	Կերամիկական սանտեխնիկա (Թաս ասիական)	Կերամիկական, չափերը՝ 430x540մմ, ողողման բաքով
50	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Զուգարանակոնքի բաքի (բաչոկի) արմատուրա)	Լողախցանով, ջուր փակող և բացող սարք, ամբողջը պլաստմասե, զսպանակով, միացումը – բաքի ներքին մասից, լրակազմի մեջ ընդգրկել լատունե ½-ից 3/8 դյուրմ ներքին պարույրով անցում, փաթեթավորումը ստվարաթղթե տուփով
51	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Կախովի առաստաղ պլաստմասե	Երկարությունը 6000մմ, լայնությունը 250մմ, միմյանց մեջ մտնող, գույնը ըստ պահանջի:
52	Բահեր (Բահ հող տեղափոխելու)	Մետաղական, հող տեղափոխելու համար, փայտյա պոչով, պոչի երկարությունը՝ 150 սմ, մետաղական մասի չափերը 240x340x2մմ:
53	Պտուտակահաններ (Պտուտակահան (ուղիղ և ձևավոր))	Պտտող մասը մետաղական, մեկ ծայրը տափակ 5 մմ լայնությամբ, մյուս ծայրը աստղաձև, բռնակը պլաստմասե
54	Գործիքների մասեր (Կտրող քար)	Մետաղ կտրելու համար, չափերը 180x3x22մմ
55	Դռան փականներ (Դռան բռնակ)	Երկարությունը՝ 260 մմ, լայնությունը՝ 50 մմ, բռնակի լայնությունը՝ 30 մմ, երկարությունը՝ 130մմ, կիսակլոր, ՑԱՊ համաձուլվածքից
56	Փականների մասեր (Դռան փականի միջուկ, L= 80 մմ)	Բանալիների քանակը ոչ պակաս 5-ից, միջուկի երկարությունը՝ 80մմ, լատունե, կշիռը առանց բանալիների ոչ պակաս 185գ-ից

Ծանոթություն՝ *Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ ԿՇ ԵԿ ԶԲ վարչության կենտրոնական պահեստ՝ ք. Երևան, Արշակունյաց 135 հասցեում:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-10/5-5 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Մեկ միավ գին (դրամ)	Ընդհանուր գումարը (դրամ)	Մատակարարումը՝ 2017թ. III եռամսյակ
1	Սոսինձ՝ հեղուկ (Հեղուկ մեխ՝ սոսինձ)	հատ	50	820	41,000	50
2	Ջերմային մեկուսիչ նյութեր (Ապակե բամբակ)	կապ	300	7,800	2,340,000	300
3	Կեղծ հատակներ (Լամինատ)	մ2	500	2,900	1,450,000	500
4	Լինոլեում (Լինոլեում)	մ2	5,100	1,420	7,242,000	5,100
5	Բիտում Բիտում	տոննա	5	220,000	1,100,000	5
6	Մակերեսային ծածկույթներ (Ռուբերոիդ)	կապ	380	1,900	722,000	380
7	Տախտակ, փայտյա Տախտակ	մ3	2	145,000	290,000	2
8	Տախտակ Տախտակ	մ3	153.4	145,000	22,243,000	153.4
9	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ50*3.2	հատ	50	120	6,000	50
10	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ100*3.2	հատ	100	410	41,000	100
11	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-50*3.2	հատ	50	250	12,500	50
12	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-100*3.2	հատ	25	590	14,750	25
13	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-150	հատ	50	3,500	175,000	50
14	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S40x20Fx40	հատ	50	450	22,500	50
15	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S50x20Fx50)	հատ	50	620	31,000	50
16	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S63x20Fx63)	հատ	50	790	39,500	50
17	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ20x20M)	հատ	50	390	19,500	50
18	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ25x20M	հատ	50	390	19,500	50
19	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի 25x20Mx25	հատ	100	390	39,000	100
20	Խողովակներ (Ջուգարանակոնքի պղձ.ճկուն միացում L=600մմ)	հատ	200	620	124,000	200
21	Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ D, 20)	մետր	1,500	220	330,000	1,500
22	Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Φ-50*3.2*1000)	մետր	100	370	37,000	100
23	Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-110*3.2*1000	մետր	100	960	96,000	100
24	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով Φ63 x50m)	հատ	30	1,550	46,500	30
25	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 63 x 50F)	հատ	50	1,900	95,000	50
26	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով (Φ50 x 2F)	հատ	50	1,080	54,000	50
27	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 20F x25փ)	հատ	100	320	32,000	100
28	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային ձգումով Φ32 x25f)	հատ	50	450	22,500	50
29	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 120^0, Φ-100)	հատ	50	700	35,000	50
30	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 120^0, Φ-150)	հատ	50	1,100	55,000	50

31	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Mx20M	հատ	50	340	17,000	50
32	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Fx20M	հատ	50	245	12,250	50
33	Նրբատախտակ Ֆաներա 10 մմ	մ2	400	2,420	968,000	400
34	Նրբատախտակ Ֆաներա 4մմ	մ2	400	1,180	472,000	400
35	Մեխ (Մեխ, 20մմ)	կիլոգրամ	200	600	120,000	200
36	Ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար (Ներկելու հոլովակ, պլաստմասե լոգնոցով)	հավաքածու	2,000	850	1,700,000	2,000
37	Վրձին, ներկարարական աշխատանքներ կատարելու համար (Վրձին)	հատ	2,000	385	770,000	2,000
38	Եռակցման նյութեր (Կարբիտ)	կիլոգրամ	500	750	375,000	500
39	Երկաթյա արտադրանք Ամրան d=12 մմ	կիլոգրամ	700	330	231,000	700
40	Մետաղալարեր Մետաղալար d=2-3 մմ	կիլոգրամ	1,967	420	826,140	1,967
41	Ջրի ծորակ, փական Ջրի փական D15 <<ARKO>>	հատ	50	1,200	60,000	50
42	Փական՝ գնդաձև, D 15(Գնդաձև փական D 15)	հատ	200	890	178,000	200
43	Փական՝գնդաձև, D 20 (Գնդաձև փական D 20)	հատ	200	1,400	280,000	200
44	Փական՝ գնդաձև, D 25 (Գնդաձև փական D25)	հատ	100	2,200	220,000	100
45	Փական, խցանային, D 15 մմ Խցանային փական D 15 մմ	հատ	30	1,300	39,000	30
46	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	հատ	30	1,600	48,000	30
47	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	հատ	30	2,000	60,000	30
48	Զուգարանակոնք (Զուգարանակոնք)	հատ	50	24,000	1,200,000	50
49	Կերամիկական սանտեխնիկա (Թաս ասիական)	հատ	50	17,500	875,000	50
50	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Զուգարանակոնքի բաքի (բաչոկի) արմատուրա)	հատ	50	1,400	70,000	50
51	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Կախովի առաստաղ պլաստմասսե	մ2	125	1,850	231,250	125
52	Բահեր (Բահ հող տեղափոխելու)	հատ	400	1,050	420,000	400
53	Պտուտակահաններ (Պտուտակահան (ուղիղ և ձևավոր))	հատ	510	180	91,800	510
54	Գործիքների մասեր (Կտրող քար)	հատ	300	340	102,000	300
55	Դռան փականներ (Դռան բռնակ)	զույգ	30	2,300	69,000	30
56	Փականների մասեր (Դռան փականի միջուկ, L= 80 մմ)	հատ	100	1,050	105,000	100
					46,315,690	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
տնօրեն

Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

AN 039742P

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-10/5-5 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝				
			Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.17թ
1	Սոսինձ՝ հեղուկ (Հեղուկ մեխ՝ սոսինձ)	24911300/1/4/2	41,000	41,000	41,000	41,000	41,000
2	Ջերմային մեկուսիչ նյութեր (Ապակե բամբակ)	44111448/1/4/15	2,340,000	2,340,000	2,340,000	2,340,000	2,340,000
3	Կեղծ հատակներ (Լամինատ)	44112160/1/4/10	1,450,000	1,450,000	1,450,000	1,450,000	1,450,000
4	Լինոլեում (Լինոլեում)	44112170/1/4/10	7,242,000	7,242,000	7,242,000	7,242,000	7,242,000
5	Բիտում Բիտում	44112410/1/4/13	1,100,000	1,100,000	1,100,000	1,100,000	1,100,000
6	Մակերեսային ծածկույթներ (Ռուբերոիդ)	44112450/1/4/15	722,000	722,000	722,000	722,000	722,000
7	Տախտակ, փայտյա Տախտակ	44119000/2/4/11	290,000	290,000	290,000	290,000	290,000
8	Տախտակ Տախտակ	44119100/1/4/11	22,243,000	22,243,000	22,243,000	22,243,000	22,243,000
9	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ50*3.2	44161230/7/4/2	6,000	6,000	6,000	6,000	6,000
10	Խողովակների պարագաներ Անկյունակ պլ. Φ100*3.2	44161230/8/4/2	41,000	41,000	41,000	41,000	41,000
11	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-50*3.2	44161230/10/4/2	12,500	12,500	12,500	12,500	12,500
12	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-100*3.2	44161230/11/4/2	14,750	14,750	14,750	14,750	14,750
13	Խողովակների պարագաներ Եռաբաշխիչ անցում Φ-150	44161230/12/4/2	175,000	175,000	175,000	175,000	175,000
14	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S40x20Fx40	44161230/1/4/2	22,500	22,500	22,500	22,500	22,500
15	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S50x20Fx50)	44161230/2/4/2	31,000	31,000	31,000	31,000	31,000
16	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի S63x20Fx63)	44161230/3/4/2	39,500	39,500	39,500	39,500	39,500
17	Խողովակների պարագաներ (Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ20x20M)	44161230/4/4/2	19,500	19,500	19,500	19,500	19,500
18	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի Φ25x20M	44161230/5/4/2	19,500	19,500	19,500	19,500	19,500
19	Խողովակների պարագաներ Պոլիէթիլենային խողովակի ամրագոտի 25x20Mx25	44161230/6/4/2	39,000	39,000	39,000	39,000	39,000
20	Խողովակներ (Զուգարանակոնքի պրծ.ճկուն միացում L=600մմ)	44163100/4/4/2	124,000	124,000	124,000	124,000	124,000
21	Խողովակներ (Մետաղապլաստե խողովակ D, 20)	44163100/8/4/9	330,000	330,000	330,000	330,000	330,000
22	Կոյուղու խողովակներ (Կոյուղու խողովակ Φ-50*3.2*1000)	44163130/1/4/9	37,000	37,000	37,000	37,000	37,000
23	Կոյուղու խողովակներ Կոյուղու խողովակ Φ-110*3.2*1000	44163130/3/4/9	96,000	96,000	96,000	96,000	96,000
24	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով Φ63 x50m)	44163200/1/4/2	46,500	46,500	46,500	46,500	46,500
25	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 63 x 50F)	44163200/2/4/2	95,000	95,000	95,000	95,000	95,000
26	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով (Φ50 x 2F)	44163200/3/4/2	54,000	54,000	54,000	54,000	54,000
27	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային խողովակից մետաղական խողովակի ձգումով 20F x25փ)	44163200/4/4/2	32,000	32,000	32,000	32,000	32,000
28	Խողովակների միացման մասեր (Անցում պոլիէթիլենային ձգումով Φ32 x25f)	44163200/5/4/2	22,500	22,500	22,500	22,500	22,500
29	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 1200, Φ-100)	44163200/12/4/2	35,000	35,000	35,000	35,000	35,000
30	Խողովակների միացման մասեր (Անկյունակ ցինկապատ թիթեղից 1200, Φ-150)	44163200/13/4/2	55,000	55,000	55,000	55,000	55,000
31	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Mx20M	44163200/14/4/2	17,000	17,000	17,000	17,000	17,000
32	Խողովակների միացման մասեր Հարմարակցիչ անցում 15Fx20M	44163200/15/4/2	12,250	12,250	12,250	12,250	12,250

33	Նրբատախտակ Ֆաներա 10 մմ	44191100/1/4/10	968,000	968,000	968,000	968,000	968,000
34	Նրբատախտակ Ֆաներա 4մմ	44191100/2/4/10	472,000	472,000	472,000	472,000	472,000
35	Մեխ (Մեխ, 20մմ)	44192600/1/4/3	120,000	120,000	120,000	120,000	120,000
36	Ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար (Ներկելու հոլովակ, պլաստմասե լոգնոցով)	44192700/1/4/4	1,700,000	1,700,000	1,700,000	1,700,000	1,700,000
37	Վրձին, ներկարարական աշխատանքներ կատարելու համար (Վրձին)	44192800/1/4/2	770,000	770,000	770,000	770,000	770,000
38	Եռակցման նյութեր (Կարբիտ)	44311180/1/4/3	375,000	375,000	375,000	375,000	375,000
39	Երկաթյա արտադրանք Ամրան d=12 մմ	44311250/2/4/3	231,000	231,000	231,000	231,000	231,000
40	Մետաղալարեր Մետաղալար d=2-3 մմ	44331300/2/4/3	826,140	826,140	826,140	826,140	826,140
41	Ջրի ծորակ, փական Ջրի փական D15 <<ARKO>>	44411110/1/4/2	60,000	60,000	60,000	60,000	60,000
42	Փական՝ գնդաձև, D 15(Գնդաձև փական D 15)	44411500/1/4/2	178,000	178,000	178,000	178,000	178,000
43	Փական՝գնդաձև, D 20 (Գնդաձև փական D 20)	44411510/1/4/2	280,000	280,000	280,000	280,000	280,000
44	Փական՝ գնդաձև, D 25 (Գնդաձև փական D25)	44411513/1/4/2	220,000	220,000	220,000	220,000	220,000
45	Փական, խցանային, D 15 մմ Խցանային փական D 15 մմ	44411515/1/4/2	39,000	39,000	39,000	39,000	39,000
46	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	44411710/1/4/2	48,000	48,000	48,000	48,000	48,000
47	Սանհանգույցի նստատեղեր (Զուգարանակոնքի կափարիչ)	44411710/2/4/2	60,000	60,000	60,000	60,000	60,000
48	Զուգարանակոնք (Զուգարանակոնք)	44411740/1/4/2	1,200,000	1,200,000	1,200,000	1,200,000	1,200,000
49	Կերամիկական սանտեխնիկա (Թաս ասիական)	44411900/1/4/2	875,000	875,000	875,000	875,000	875,000
50	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Զուգարանակոնքի բաքի (բաչոկի) արմատուրա)	44423680/4/4/2	70,000	70,000	70,000	70,000	70,000
51	Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ Կախովի առաստաղ պլաստմասե	44423680/7/4/10	231,250	231,250	231,250	231,250	231,250
52	Բահեր (Բահ հող տեղափոխելու)	44511110/3/4/2	420,000	420,000	420,000	420,000	420,000
53	Պտուտակահաններ (Պտուտակահան (ուղիղ և ձևավոր))	44511330/2/4/2	91,800	91,800	91,800	91,800	91,800
54	Գործիքների մասեր (Կտրող քար)	44511400/1/4/2	102,000	102,000	102,000	102,000	102,000
55	Դռան փականներ (Դռան բռնակ)	44521120/2/4/21	69,000	69,000	69,000	69,000	69,000
56	Փականների մասեր (Դռան փականի միջուկ, L= 80 մմ)	44521210/2/4/2	105,000	105,000	105,000	105,000	105,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
/ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

AN 0398421

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-10/5-5 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

AN 039842P

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-10/5-5 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախապատրաստած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

AN 0398420